

ՌՈՒԲԵՐՏ ԹՈՒՄՄԱԽՅԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվ. լեզվի ինստիտուտ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Ուղղագրական բարեփոխումները հատուկ են աշխարհի շատ լեզուների. Ժամանակի ընթացքում լեզվում կատարված փոփոխությունները հանգեցնում են գրության և արտասանության տարբերությունների: Վերջիններիս բացարձակ համապատասխանություն չի եղել և չի լինի. արհեստականորեն ընդունված կանոններն ու որոշումները հակասական են հանրության կողմից արդեն յուրացրած մոտեցումներին:

Լեզվում գործում են հնչյունական օրենքներ, որոնք համատարած, համակարգային բնույթ չունեն. ր – ից հետո հ – ի արտասանությունը *աշխարհ, խոնարհ, խորհուրդ, ճանապարհ, արհամարհել, շնորհակալություն* և սրանցով կազմված ածանցյալներում թերևս ժամանակին եղել է կանոնական և հնչել է, իսկ հիմա այն չի հնչում. ի՞նչ անել, հանե՞լ գրությունից, թե՞ թողնել գրության այդ ձևը:

Ահա Մ. Աբեղյանն էլ նույն մոտեցմամբ բառերի վերջնահնչյուն յ – ն հանեց, քանի որ այն չէր արտասանվում, սակայն այստեղ խնդիրն այն էր, որ թեքված ձևերում այն վերականգնվում էր, այն էլ միայն հենց ա-ից, ո – ից հետո:

Հնչյունների արտաբերման ժամանակ հնարավոր են արտասանական տարբերակներ, որոնք պայմանավորված են ինչպես բառերի մեջ դրանց զբաղեցրած դիրքով, իրենց շրջապատով, այնպես էլ բառային շեշտով: Դրա համար երբեմն խոսում են հնչույթների ուժեղ կամ թույլ արտասանության մասին. այսպես, հ – ի բառասկզբի դիրքն ուժեղ է, արտաբերությունն էլ հապատասխանաբար՝ ուժեղ. մինչդեռ այլ դիրքերում, և հատկապես ր – ից հետո՝ համեմատաբար թույլ. այս դիրքում հնարավոր է նաև հնչույթի անկում՝ կորուստ:

Գրության և արտասանության հարցը միշտ էլ եղել է առաջնահերթ. Ուղղագրական ցանկացած բնույթի փոփոխությունը բանավիճային հարցերի է բխեցրել, ընդ որում, եղած ցանկացած որակի առաջնահերթ փոփոխություն

արքայադճության նման հանցանք է դիտարկվում. Ասես վերացվում, խզվում է կապը հին ու նոր մշակութային արժեքների միջև:

Ուղղագրական փոփոխությունները առաջին հերթին ազդում են հանրակրթական ոլորտի վրա: Մինչդեռ փոփոխությունները պայմանավորված են նաև արտաքին գործոնների ազդեցությամբ: Երբեմն լեզվի մեջ մուտք են գործում ուղղագրական այնպիսի կազմություններ, որոնց հնչույթը, սովորական լինելով օտար լեզվի համար, փոխառու լեզվում անսովոր են, կամ հարմարեցվում են այդ լեզվի արտահայտաբանությանը. օրինակ, *մակդոնալդս, շմիդտ* բառերը փոխառում ու փորձում ենք՝ կամ արտասանել օտար արտաբերությամբ, կամ հարմարեցնենք հայերենի արտաբերության կանոններին՝ խաթարել ճիշտ արտասանությունը:

Արևմտահայերենի որոշ քերականներ այսօրինակ հարցերը լուծում են բառի օտար արտասանությունը փոխառելով ու այն համարելով հայերենի հատկանիշ՝ այդպիսով հայերենում երկբարբառներ ստեղծելով. օրինակ, Էօժեն

Դեռևս 1890 –ականներից սկսած Մ. Աբեղյանը հաստատում էր այն միտքը, որ արդի գրական լեզվում երկբարբառները վերացել են ինչպես գրականում, այնպես էլ բարբառներում: Նա գրում էր, որ «երկբարբառները բաղադրյալ, այնինչ ձայնավորները պարզ հնչյուններ են. երկբարբառ ունենալը մեր հին լեզվի՝ գրաբարի հատկությունն է, այնինչ նոր լեզուն (բարբառները) թոթափել է երկբարբառ հնչյունները, այդ բաղադրյալ երկձայն ձայնավորներին փոխանակել տալով պարզ ձայնավորներ: Գրաբարի *ե, օ, էա, այ, ոյ, աւ, եւ, իւ, ու* երկու ձայնից կազմված ձայնավորնորը, երկբարբառները, մեր նոր լեզվի մեջ չկան. Դրանց բոլորին ընդհանրապես փոխանակել են պարզ ձայնավորներ՝ *ա, է, ի, օ, ու*:¹ Իր « Հայոց լեզվի տեսություն » աշխատության մեջ նա գրում էր. « Մեր նոր գրական լեզվի մեջ ձայնավորները թվով վեց են՝ Ա, Է, Ը, Ի, Օ, Ու: Բարբառների մեջ կան նաև ուրիշ ձայնավորներ, որոնք այստեղ նկատի չեն առնվում իբրև բարբառային հնչյուններ, որոնց համար նույնիսկ տառեր չունենք, ինչպես են մի քանի բարբառների մեջ ֆրանսերենի *ս*, գերմաներենի *ս* հնչյունը, ֆրանսերենի *eu* գերմաներենի *օ* հնչյունը և

¹ Մ. Աբեղյան, Աշխատություններ, հատոր Ը, էջ 330:

ուրիշները: Դրանք գրական լեզվի մեջ ընդունված չեն, և եթե մի քանի անհատներ գրական լեզվով խոսելիս այս կամ այն բառի արտասանության մեջ մտցնում են այդ և ուրիշ ձայնավորներ հնչյուններ, այդ միայն բարբառային ազդեցություններ են:²

Առանձին հնչյունների գրության վերաբերյալ վեճերը ծավալվել են հայ մամուլի էջերում 19-րդ դարի կեսերից սկսած, որոնց անդրադարձել է նաև Մ. Աբեղյանը: Նա առաջնորդվում էր հետևյալ մղումով, սկզբունքով, որ «ընդհանուր և ընդունված է բոլոր ազգերից. ամեն գրական լեզվի համար միակերպ քերականության հետ անհրաժեշտ պայման է նաև միակերպ ուղղագրությունը, որով պահվում է գրական լեզվի միությունը. և զանազան բարբառների մարդիկ, որոնք խոսելիս, հաճախ, տարբեր արտասանության են հետևում, իրար գրածը հեշտությամբ հասկանում են: Դրա մեջ է հենց գրական լեզվի և գրավոր խոսքի մեծ նշանակությունը:»³

Ուղղագրության հարցերը հայ մտավորականների ուշադրության կենտրոնում են եղել աշխարհաբարի ձևավորման առաջին իսկ օրերից:

Ուղղագրական իր ռեֆորմում Մ. Աբեղյանն առաջնորդվել է հենց այս սկզբունքով: Ինչպես նշվեց վերը, հիմնականում դիտարկել է ձայնավորական համակարգը՝ բաղաձայններին անդրադառնալով միայն մասամբ (յ-ն բառավերջում ընկնում է, իսկ բառասկզբում հնչում *h*, իսկ *z* և *չ* բաղաձայնների պարագայում գործածել *չ*/գիրը):

Գրավոր խոսքում առաջացած անմիօրինակությունը մտահոգում էր նաև եկեղեցուն, հոգևոր հայրերին. դրա ապացույցն է Էջմիածնում 1913 թվականին ուղղագրության բարեփոխումների մասին Աբեղյանի կարդացած զեկուցումը: Նրա նպատակը գրական - կանոնական – միասնական համակարգված ձևերի ընդունումն էր, գտնելով, որ մեկ հնչյունին մեկ տառ գրությունը կնպաստեր առկա անմիօրինակության վերացմանը:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 75 – 76:

³ Մ. Աբեղյան, Աշխատություններ, հատոր Ը, էջ էջ 295:

Առաջին համաշխարհային պատերազմը, դրան հաջորդած ցեղասպանությունը, Հայաստանում ստեղծված քաղաքական անբարենպաստ վիճակը խոչընդոտեցին աբեղյանական ուղղագրության ռեֆորմի ընդունմանը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո միայն հնարավոր դարձավ այդ ռեֆորմի իրականացումը:

Որոնք էին դրական այն դրույթները, որ բերեց Մ. Աբեղյանը իր ռեֆորմով.

1. լեզվում, հատկապես մամուլում, առաջացած գրության կրկնակ ձևերի միօրինականացում,
2. արտասանության և գրության հակասությունների հնարավորինս վերացում,
3. մեկ հնչյունին մեկ տառ համապատասխանեցում և դրանով իսկ ուղղագրության պարզեցում և այս սկզբունքի հետևողական կիրառում լազվում:

Իսկ որոնք էին այն հակասությունները, որ առաջ եկան դրա հետևանքով.

1. ավանդական ուղղագրության փոխարեն առաջարկված դրույթների արդյունքում աղավաղվում էին հին բառապատկերները՝ խզելով կապը բառի գրության հին ու նոր ձևերի միջև (ուստի և կապը հին ու նոր սերունդների միջև):

2. Նոր ուղղագրությունը, նպաստելով համատարած անգրագիտության վերացմանը, ընդունելի չէր ժամանակի մտավորականության մեծ մասի համար, և, միաժամանակ, այդ որոշումը չէր կարող տարածվել հայկական՝ արդեն կազմավորված սփյուռքի գաղթօջախներում, որոնք այդպես էլ չընդունեցին այդ ուղղագրությունը՝ դրանով իսկ խորացնելով արևմտահայ ու արևելահայ գրական լեզուների միջև նկատվող վիհը:

Ուղղագրական ռեֆորմը արևելահայ իրականության համար այլևս փաստ է: Ճիշտ է, այն ամբողջովին չի արտացոլում աբեղյանական

բարեփոխումները, քանի որ 1940- ականներին վերջինս մասամբ փոփոխության ենթարկվեց՝ փորձելով զերծ մնալ արեղյանական ծայրահեղություններից (վերականգնվեցին է, օ տառերը և ի-ն):